

**ԱՐԵՆ ՏԵՐ-ԲԱԼՅԱՆ**

«Բարձրավորտ էլեկտրացանցեր» ՓԲԸ գլխավոր տնօրենի խորհրդական,  
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի ասպիրանտ

**ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ  
ՉԱՐԳԱՅՈՒՄՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ԳԼՈՒԲԱԼԻՉԱՅԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հասկանալու համար, թե ինչպես է դրսևորվում համեմատական իրավունքի և գլոբալիզացիայի կապը, անհրաժեշտ է նախ և առաջ ուսումնասիրել համեմատական իրավունքի պատմությունը, և հասկանալ համեմատական իրավունքի առաջացման և զարգացման պատճառները: Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ համեմատական իրավունքը, միշտ ուղղված է եղել իրավունքի զարգացման և մեկ միասնական իրավունքի ստեղծման խնդրի լուծմանը, ուստի կատարել է տարբեր իրավունքների միավորման ֆունկցիա և ինչի արդյունքում, անուղղակիորեն հանգեցրել է իրավունքի գլոբալիզացիայի: Սույն աշխատությունն իրենից ներկայացնում է համեմատական իրավունքի պատմության ուսումնասիրություն, որի նպատակն է բացահայտել իրավունքի գլոբալիզացիայի տարրերը հենց այս իրավունքի ճյուղի ակունքներում:

*Հիմնաբաներ- Համեմատական իրավունքի զարգացում, իրավունքի գլոբալիզացիա:*

Իրավահամեմատական վերլուծությունը և համեմատական իրավունքը իրենց պատմական զարգացման ընթացքում ունեցել են բազմաթիվ պատճառներ, սակայն այդ պատճառների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցրել հենց առկա իրավական համակարգերի միջև հակասությունների վերացումը և դրանց միավորումը մեկ՝ համընդհանուր իրավական տրամաբանության և իրավունքի ներքո: Ուստի, եթե ընդունենք, որ համեմատական իրավունքի հիմնական նպատակներից է իրավունքի գլոբալիզացիան, ապա կկարողանանք գլոբալիզացիայի պատճառների շարքում վստահաբար դասել նաև համեմատական իրավունքի զարգացումը:

Հասկանալու համար իրավագիտության մեջ համեմատական իրավունքի առաքելությունը, անհրաժեշտ է անդրադարձ կատարել համեմատական իրավունքի պատմական զարգացմանը՝ բացահայտելու համար տարբեր ժամանակների և ազգերի իրավագետների և փիլիսոփաների վերաբերմունքը համեմատական իրավունքի նկատմամբ:

Այսպես, համեմատական իրավունքը և իրավահամեմատական վերլուծությունը, ժամանակակից իմաստով, սկիզբ են առել 20-րդ դարի սկզբին, սակայն գիտական շրջանակներում տարածված է այն կարծիքը, որ, իրավահամեմատական վերլուծությունը սկիզբ է առել ավելի վաղ:

Այսպես, բավականին տարածված է գիտնականների կողմից իրավահամեմատական վերլուծության առաջացման վերաբերյալ պատմական

ակնարկ կատարելիս հղում կատարել *Հունաստանի անտիկ ժամանակաշրջանի* ամենաառաջավոր փիլիսոփաներին: Համեմատական իրավունքի առաջացման համար առաջին քայլերը կատարած հույն փիլիսոփաների շարքում հարկ է նշել հատկապես Արիստոտելին, որն իր հայտնի «Քաղաքականություն» աշխատության մեջ կատարել է համեմատական վերլուծության մեզ հայտնի առաջին փորձը: Մասնավորապես, վերոնշյալի վերաբերյալ Չ. Դոնահյուն (2012) նշել է, «եթե միավորենք Արիստոտելի «Քաղաքականություն» գործը վերջինիս տեղեկատվություն հավաքելու ջանքերի հետ, ապա քիչ կլինեն կասկածները այն մասին, որ Արիստոտելի և իր դպրոցի կատարածը հանդիսանում է իրավահամեմատական իրավունք»<sup>1</sup>: «Համեմատական իրավունքի ներածություն»<sup>2</sup> գրքում Ջվիգերտը և Կոտցը (1988) համեմատական իրավունքի պատմությանը անդրադառնալիս առաջին հերթին անդրադառնում են Պլատոնին, քանի որ վերջինս «կատարել է հունական քաղաք-պետությունների օրենքների համեմատություններ.նա ոչ միայն նկարագրում է դրանք, այլ նաև համեմատում է այդ օրենքները իր կողմից այդ օրենքների հիման վրա մշակված կատարյալ սահմանադրության հետ»<sup>3</sup>: Ավելին, անդրադարձ կատարելով անտիկ Հունաստանի հայտնի օրենսդիրներ Լիկուրգոսին (Սպարտա, մ.թ.ա. IX-VIII դդ.), Դրակոյին (Աթենք, մ.թ.ա. VII դ.) և Սողոնին (Աթենք, մ.թ.ա. VII-V դդ.) Ռոբերտո Սկարսիգլիան (2015) նշում է, որ «կարևոր է նշել, որ վերջիններս ճանապարհորդել

www.journal.lawinstitute.am

են բազմաթիվ տարիներ՝ հյուրընկալելու համար այն պետություններ, որտեղ առկա են առավել լավ օրենքներ»<sup>4</sup>: Այնուհետև, Սկարսիզիան հետևություն է անում, որ համեմատական իրավունքը սկիզբ է դրվել հենց անտիկ իրավագետների կողմից: Վերոնշյալ ակնարկներից կարելի է եզրակացնել, որ նույնիսկ համեմատական իրավունքի առաջացման ամենավաղ շրջանում հիմնական նպատակը եղել է առկա իրավական համակարգի զարգացման համար լավագույն իրավական մտքի բացահայտումը:

Հույն փիլիսոփաների և օրենսդիրների գործը համեմատական իրավունքի զարգացման ասպարեզում շարունակել են Հին Հռոմի օրենսդիրները և իրավագետները: Հին Հռոմի իրավական մտքի կարևոր նմուշներից է Հռոմի «12 աղյուսների օրենքը», որի վերաբերյալ իտալացի իրավագետ և համեմատական իրավունքի պիոներ Է. Ամարին (1857) նշում է, որ հին օրենսդրությունները կազմված են եղել բարոյական նորմերից և դրանց նպատակն է եղել առավելապես «բացարձակ իրավունքի գործնական հաղթանակը», այլ ոչ թե այն հանդուստը, որ օրենսդրությունը կարելի է օգտագործել որպես համեմատություն<sup>5</sup>: Նշվածին հարկ է հավելել նաև այն, որ այդ ժամանակներում օրենդրությունը զարգացվում էր բացառապես ուժեղ պետությունների կողմից՝ իրենց ազդեցության տարածման շրջանակներում, ինչի արդյունքում բազմաթիվ պետությունների օրենքները մշակելիս առավելապես կարևորվում էր ոչ թե դրանց արդյունավետությունը կամ տվյալ երկրի ավանդույթների հետ համահունչ լինելը, այլ՝ տվյալ հզոր երկրի հրամայական պահանջը: Հռոմեացի իրավագետների կողմից կատարվել են բազմաթիվ փորձեր՝ Հռոմեական և օտար իրավունքի համեմատական ուսումնասիրությունների գործում, սակայն առավել համակարգված մեթոդոլոգիա կարելի է տեսնել 212 թվականի «Անտոնինուսի Սահմանադրությունում», քանի որ այդ փաստաթղթով փորձ է կատարվել վերացնել հռոմեական և օտար իրավունքների միջև առկա հակասությունները: Նմանատիպ երևույթ է հանդիսանում նաև Jus gentium-ը՝ սովորության իրավունքը, որի նորմերով էին կարգավորվում օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց միջև առաջացող իրավահարաբերությունները: Վ. Ավետիսյանի (2013) համաձայն՝ մասնավոր իրավունքի այս ճյուղի զարգացման հիման վրա էլ ձևավորվել է ներկայիս միջազգային իրավունքը<sup>6</sup>: Համաձայն Չ. Ժ. Շերմանի (1874)՝ Աստվածային իրավունքը կամ «Մովսեսի և հռոմեական օրենքների համեմատությունը» հանդիսանում է «համեմատական իրավունքի ամենից հին աշխատություններից»<sup>7</sup>: Հատկապես ուսումնասիրվում են

դեղիկտային իրավունքի (tort law) և քրեական իրավունքի նմանություններն ու տարբերությունները: Սակայն, ինչպես նշում է Ջիորջիո Բարոն Ադեսին իր «Աստվածային իրավունքի դարաշրջանը» գրքում՝ այդ աշխատությունը կազմողի հիմնական նպատակն է եղել ցույց տալ, որ հռոմեական իրավունքը ընդհանուր առմամբ համապատասխանում է Մովսեսյան իրավունքին և որոշ առումով այն նույնիսկ նպաստում է այդ իրավունքի կատարմանը<sup>8</sup>:

Իրավահամեմատական վերլուծության հետագա զարգացումը տեղի է ունենում արդեն միջնադարում՝ Արևմտյան Հռոմեական Կայսրության անկման (476 թվական) և *գերմանական ցեղերի ներխուժման ժամանակահատվածում*, երբ հռոմեականից էականորեն տարբերվող գերմանական իրավունքը հռոմեականի հետ զուգահեռ կիրառվում էր կայսրության տարածքում: Նշված հանգամանքը ստիպեց ժամանակի իրավաբան-փիլիսոփաներին զբաղվել հռոմեական և գերմանական իրավունքների համեմատական ուսումնասիրություններով: Միևնույն ժամանակ, միջնադարում իրավունքի համեմատական վերլուծության պատճառ էր եկեղեցական կամ կանոնական իրավունքի զարգացումը: Սա պայմանավորված էր նրանով, որ այդ ժամանակի իրավագետների և մտավորականության մեծամասնությունը հանդիսանում էին եկեղեցու սպասավորներ: Իրավունքի ոլորտում համեմատական ուսումնասիրություններով էին զբաղվում նաև միջնադարյան գիտական զարգացումը առաջ տանող Բոլոնիայի համալսարանից սերված գիտնականները՝ գլոսատորները, ինչպես նաև վերջիններիս հետևորդները՝ էտգլոսատորները (մեկնիչներ կամ կոմենտատորներ), որոնք «ձգտում էին վերարտադրել հռոմեական իրավունքի ոգին, նրա էությունը և դրա համար ստեղծում էին ընդհանրական հասկացություններ»<sup>9</sup>: Ետգլոսատորների աշխատանքն իրենից ներկայացնում էր պարբերական համեմատությունների կատարում այդ ժամանակաշրջանում գործող իրավունքների, հատկապես՝ գերմանական և կանոնական իրավունքների կամ գերմանական և հռոմեական իրավունքների միջև:

*Վերածննդի ժամանակաշրջանում* հռոմեական իրավունքի ուսումնասիրության ուղղվածությունը շարունակվեց նոր շնչով, և այն հիմնված չէր միջնադարյան իրավագետների կատարած ուսումնասիրությունների վրա: Այս ուսումնասիրությունների գործում մեծ ներդրում ունեցան հատկապես Ֆրանսիայի և Գերմանիայի իրավագետները, ովքեր, համաձայն Ու. Հուգի (1932), «գիտական մեթոդով զարգացրեցին սովորության իրավունքը՝ կատարելով ազգային և հռոմեական իրավունքի համակարգված ուսումնասիրություններ»<sup>10</sup>: Սովորու-

թային իրավունքի գիտական մոտեցման արդյունքում սովորության նորմերը գրի առնվեցին, ինչի հիմնական պատճառները, համաձայն Ա. Էսմեյնի (1892), նախկինում Հռոմեական իրավունքի գրավոր լինելն էր և սովորության կիրառության դյուրինացումն էր<sup>11</sup> :

Ինչպես տեսնում ենք, Հռոմեական կայսրությունից ի վեր Հռոմեական իրավունքի մասով տեղի էր ունեցել իրավունքի գլոբալիզացիա, քանի որ մինչև 17-րդ դարը իրավագետների կողմից ուսումնասիրվող տարբեր իրավական համակարգերը համեմատության մեջ էին դրվում հենց Հռոմեական իրավունքի հետ, որը հանդիսանում էր այդ ժամանակաշրջանների քաղաքակիրթ պետությունների կողմից ամենից կիրառելի իրավունքը և ուներ նմուշային նշանակություն պետությունների համար իրենց ազգային իրավական համակարգերի զարգացման գործում:

17-18-րդ դարերում համեմատական վերլուծության մեծ զարգացում տեղի ունեցավ Անգլիայում՝ պայմանավորված ընդհանուր իրավունքի և արդար իրավունքի ունիֆիկացմամբ: Այս ժամանակաշրջանում, Եվրոպայում իրավահամեմատական վերլուծությունների կատարման հիմնական խթանը հանդիսանում էին տարբեր երկրների կամ տարածաշրջանների իրավունքների միջև ընդհանրությունների հայտնաբերումը, ինչն անհրաժեշտ էր «բոլորի կողմից ընդունելի տեսակետը» կամ «ընդհանուր սկզբունքը» հասկանալու և դատարաններում կիրառելու համար<sup>12</sup> : Այսպես, 17-րդ դարի սկզբին «համընդհանուր արդարության» գաղափարների կողմնակից էր «Էմպիրիզմի հայրը» համարվող անգլիացի հայտնի փիլիսոփա և պատմաբան Ֆ. Բեկոնը (1623), ով կարևորում էր «համընդհանուր արդարության» համակարգի զարգացումը, ինչի շնորհիվ հնարավոր կլիներ զարգացնել յուրաքանչյուր պետության իրավունքը<sup>13</sup> : Բեկոնի այս գաղափարը ըստ էության հանդիսանում է իրավունքի գլոբալիզացիայի կոչ, բայց ոչ թե նվաճողական նպատակներով, ինչը երկար ժամանակ ուղեկցել է իրավունքի զարգացմանը, այլ գիտական նպատակով: Ժամանակի մեկ այլ հայտնի փիլիսոփա Գ. Լայբնիցը, եղել է առաջիններից, ով առաջարկել է Եվրամիության նախատիպը հանդիսացող Եվրոպական կոնֆեդերացիայի ստեղծումը և իրավունքի համեմատական ուսումնասիրությունների իրականացում է քարոզել: Այնուամենայնիվ, ոչ Բեկոնը, և ոչ էլ Լայբնիցը, չնայած կարևորում էին իրավունքի համեմատական վերլուծության անհրաժեշտությունը, չեն իրականացրել որևէ նշանակալից վերլուծություն համեմատական իրավունքի ոլորտում: Այդ ժամանակաշրջանում, համեմատական վերլուծություններ են իրականացրել հատկապես Ջ. Սել-

դենը, Հ. Գրոցիուսը, Ջ. Վիկոն և իշխանությունների բաժանման սկզբունքի ստեղծողներից համարվող Շ. Լ. Մոնտեսքյուն: Մոնտեսքյոյի «Օրենքների ոգու մասին» աշխատությունը, համաձայն բրիտանացի մարդաբան Դ. Պոկոկի (1928), «մարդկային հասարակության տարբեր տեսակները ուսումնասիրելու, դասակարգելու և համեմատելու առաջին համառոտ փորձն էր»<sup>14</sup> :

Միաժամանակ, Հյուսիսային Ամերիկայում իրավահամեմատական վերլուծություն կատարելու հիմնական պատճառն էր հանդիսանում անգլիական և ֆրանսիական իրավունքների քաղաքական բախումը: Այսպես, եթե ամերիկացի դատավորները և իրավագետները կիրառում էին Անգլիական իրավունքի վերաբերյալ Ու. Բլեքսթոնգի մեկնաբանությունները<sup>15</sup>, ապա Ֆրանսիայի հեղափոխությունից հետո լիբերալ հյուսիսային ամերիկացիները մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում ֆրանսիական իրավունքի նկատմամբ:

Գերմանիայում, 19-րդ դարի առաջին կեսին համեմատական իրավունքի զարգացման գործում մեծ ներդրում ունեցավ հատկապես ժամանակի ամենահայտնի քրեական իրավունքի դասախոս Ա. Ֆոերբախը, ով ձևակերպեց «Համեմատական իրավունքի համընդհանուր գիտության» տեսությունը: Համաձայն Ֆոերբախի՝ իրավագիտությունը էմպիրիկ (փորձարարական) գիտություն է, սակայն, քանի որ այն սահմանափակված չէ ժամանակով և տարածությամբ, նրա ուսումնասիրության առարկա պետք է լինեն բոլոր ժամանակների և ազգերի իրավունքը և իրավական ինստիտուտները, ինչն էլ պետք է ուղեկցվի համեմատություններով<sup>16</sup> : Այդ ժամանակաշրջանի մեկ այլ նշանակալից իրավագետ էր Է. Գանսը, ով նշում էր, որ «յուրաքանչյուր ազգի իրավական պատմությունը ենթադրում է համընդհանուր իրավական զարգացման որոշակի փուլ, ուստի իրավագիտության պատմությունը պետք է ունենա համեմատական մեթոդ»<sup>17</sup> : Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ արդեն համակարգված գիտության պայմաններում, որտեղ կարևորվում էր ոչ միայն ուսումնասիրության նպատակը, այլ նաև ուսումնասիրության առարկայի շրջանակը և մեթոդաբանությունը, Ֆոերբախը և Գանսը ներկայացրեցին իրավահամեմատական ուսումնասիրությունների փիլիսոփայությունը:

Ֆրանսիայում, 19-րդ դարում, նույնպես նկատվեց այլ իրավական համակարգերի ուսումնասիրության հետաքրքրություն: Դեռևս 1801 թվականին Նապոլեոն Բոնապարտի կողմից ստեղծվել էր կենտրոն, որը զբաղվում էր այլ պետությունների ամենից կարևոր օրենքների դասակարգմամբ, թարգմանությամբ և ուսումնասիրությամբ: Նշված կենտրոնը սակայն երկար կյանք չունեցավ և սահ-

մանափակվեց բացառապես պրուսական պետությունների ընդհանուր օրենսգրքի թարգմանությամբ<sup>18</sup> : Այդ ժամանակաշրջանի համեմատական իրավունքով զբաղվող ֆրանսիացի իրավագետների շարքում հարկ է նշել Է. Լամբերտին (1959): Մարդու «համեմատական հոգեբանության» կարևորության վերաբերյալ Լամբերտը նշում է, որ մարդու հոգեբանությունը, հիմնված է փորձի վրա, էականորեն առանձնացված է համեմատական հոգեբանությունից, քանի որ վերջինս շատ օբյեկտիվ է<sup>19</sup> : Ռ. Սալեյը մեծ ներդրում է ունեցել համեմատության գործնական նշանակության զարգացման գործում, մասնավորապես, նա ցույց է տվել, թե ինչպես է իրավական համեմատությունը կատարվում երկու տարբեր և իրար հետ չկապված փուլերով: Այսպես, առաջին փուլում հետազոտողը հաստատում է յուրաքանչյուր օրենսդրության ընդհանուր տարրերը, իրավական համակարգերի և ինստիտուտների վերլուծության միջոցով, իսկ 2-րդ փուլով համեմատություն իրականացնողը ներկայացնում է իր վերլուծության արդյունքները՝ հետագայում օրենսդիրների կամ այլ պետությունների իրավագետների կողմից կիրառման համար: Համեմատական իրավունքի և իրավահամեմատական վերլուծության զարգացման տեսանկյունից հատկանշական է 1869 թվականի փետրվարի 16-ին Փարիզում Համեմատական օրենսդրության միության ստեղծումը, որը չնայած ուներ ֆրանսիական և գերմանական իրավունքի ուսումնասիրության ամբիոններ, այնուամենայնիվ, առավել մեծ նշանակություն էր տալիս անգլիական իրավունքին:

Անգլիայում համեմատական իրավունքի զարգացումը մեծ թափ առավ 19-րդ դարի կեսերին (1837 թվական), երբ Ռ. Բուրժը (1907), բավարարելով օտարերկրյա իրավունքի վերաբերյալ այդ ժամանակաշրջանի անգլիացի իրավագետների պահանջը, հրապարակեց իր «Մեկնաբանությունները գաղութային և օտարերկրյա իրավունքի վերաբերյալ, ընդհանուր առմամբ, ինչպես նաև՝ այդ իրավունքների միջև և անգլիական իրավունքի հետ առկա հակասությունները», ինչը մեծ տարածում ունեցավ ոչ միայն Բրիտանական կայսրության շրջանակներում, այլ ամբողջ աշխարհում<sup>20</sup> և հանդիսացավ համեմատական իրավունքում ժամանակի լավագույն աշխատությունը՝ նվիրված մասնավոր իրավունքին: Հարկ է նշել, որ Լ. Լեվին, ոգևորված լինելով «Համագերմանական մտրիակների ակտով», որը Գերմանիայի օրենքները միավորելու առաջին փորձերից էր՝ ժամանակակից իմաստով<sup>21</sup>, տալիս է միջազգային համագումարների միջոցով առևտրային իրավունքի վերաբերյալ *միջազգային համընդհանուր օրենսգրքի ստեղծման գաղափարը, որը հանդիսանում է իրավունքի մի ամբողջ ճյու-*

*ղի ունի ֆիկացման առաջին առաջարկը աշխարհում*<sup>22</sup>: Պատմական և ժամանակակից իրավունքների համեմատության գործում նշանակալից է Հ. Մեյնի (1861) կողմից գրված «Հին իրավունք» գիրքը, որի նախաբանում նշված է, որ «սույն էջերի գլխավոր նպատակը մարդկության հնագույն գաղափարների ցուցադրումն է, ինչպես դրանք նշված են Հին իրավունքում և վերհանելը այդ գաղափարների կապը ժամանակակից մտքի հետ»<sup>23</sup> :

Իսպանիայում համեմատական վերլուծությունն իր զարգացումն էր ապրում հատկապես սահմանադրական իրավունքում: Հարկ է նշել հատկապես Օվիեդո համալսարանի դասախոս Ա. Պոսադային, ով գրել է իր «Բաղաքական իրավունք» հայտնի աշխատությունը, որը չնայած առաջին հերթին հանդիսանում է գիտական աշխատանք սահմանադրության իրավունքի վերաբերյալ, սակայն ներառում է սահմանադրական իրավունքի համեմատական վերլուծության բազմաթիվ տարրեր:

Իտալիայում համեմատական իրավունքի հայրն է համարվում Էմերիկո Ամարին, ով հայտնի է հատկապես 1857 թվականի իր «Համեմատական իրավունքի գիտության քննադատությունը» գրքով, որում նա կարևորում է այլ երկրների տարբեր ժամանակների իրավունքի ուսումնասիրությունը և կարևորում է իրավագիտության մեջ նոր, անկախ գիտության ստեղծումը: Իտալիայում, համեմատական իրավունքի հետևորդների շարքում հարկ է նշել նաև Կ. Ֆ. Գաբբային, ով մեծ ներդրում է ունեցել ազգային իրավունքի աղբյուրների ձևավորման գործում՝ համեմատական իրավունքի կիրառմամբ:

ԱՄՆ-ում 19-րդ դարի սկզբին տիրում էր ընդդիմադիր մթնոլորտ Անգլիական իրավունքի դեմ, որը պայմանավորված էր 18-րդ դարի վերջին Անգլիայի հետ «Անկախության պատերազմով»: Այս ժամանակահատվածում օրենքով արգելվում է դատարաններում անգլիական իրավական նյութերի կիրառումը: Օրինակ, Նյու Ջերսիում, ոչ միայն արգելվում էր անգլիական դատավճռերի (դատական նախադեպի) կիրառումը, այլ նաև արգելված էր որևէ հավաքածուի, մեկնաբանությունների, դասախոսությունների, գիտական աշխատությունների կամ այլ ընդհանուր իրավունքի նյութերի կիրառումը<sup>24</sup> :

Համեմատական իրավունքի զարգացման գործում կարևոր նշանակություն ուներ *1900 թվականին Փարիզում կայացած «Համեմատական իրավունքի առաջին միջազգային համագումարը»*<sup>25</sup>, որին մասնակցում էին մասնագետներ Եվրոպական տարբեր երկրներից, և նրանց քննարկման առարկան էր համեմատական իրավունքի բնույթը, նպատակը և ընդհանուր հետաքրքրությունը: Համագումարում կարևոր նշանակություն էր տրվել

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

«քաղաքակիրթ աշխարհի համար ընդհանուր իրավունքի» ստեղծման գաղափարը, ինչը պետք է կատարվեր միջազգային իրավունքի միջոցով: Այնուամենայնիվ, համագումարի հիմնական թեման հանդիսանում էր համեմատական իրավունքը և կոդիֆիկացիան (քանի որ համագումարին մասնակցում էր ընդհանուր մեկ անգլիացի իրավագետ, իսկ մնացած իրավագետները եվրոպական մայրցամաքի այնպիսի երկրներից էին, որոնք հանդիսանում էին ժամանակագրորեն իրավական ընտանիքի անդամ):

Համեմատական իրավունքի առաջին միջազգային համագումարից հետո հետո համեմատական իրավունքը մեծ տարածում ձեռք բերեց բազմաթիվ երկրներում: Իրավունքի այս ճյուղի զարգացումը հատկապես արագացավ Առաջին համաշխարհային պատերազմից հետո, պայմանավորված աշխարհում բազմաթիվ հետազոտական կենտրոնների ստեղծմամբ: Ֆրանսիայում, 20-րդ դարում համեմատական իրավունքի զարգացման գործում նշանակալից իրադարձություն էր Լամբերտի կողմից Լիոնում Համեմատական իրավունքի ինստիտուտի հիմնադրումը: Այսպես, եթե Ֆրանսիայի քոլեջի Համեմատական իրավունքի պատմության ամբիոնի դասընթացները համակարգված չէին և առավելապես ուղղված էին ֆրանսիական իրավունքի զարգացմանը, ապա արդեն Համեմատական իրավունքի ինստիտուտը, ունենալով իրավահամեմատական հստակ մեթոդոլոգիա, հանդիսացավ օրինակ այլ կրթական համալիրներում համեմատական իրավունքի ուսումնասիրության համար:

Գերմանիայում, 1900 թվականին ուժի մեջ մտավ Գերմանիայի քաղաքացիական օրենսգիրքը, ինչն էլ բավականին երկար ժամանակ դարձավ գերմանացի իրավաբանների ուսումնասիրության առարկան: Այնուամենայնիվ, մի շարք իրավագետների ուշադրության կենտրոնում շարունակեց մնալ համեմատական իրավունքը: Մասնավորապես, Գերմանիայում համեմատական իրավունքի զարգացման գործում մեծ ներդրում ունեցավ Է. Ռաբեյլը, ով 1917 թվականին հիմնադրեց Գերմանիայում համեմատական իրավունքի առաջին ինստիտուտը: Համաձայն Ռաբեյլի՝ իրավական կանոնները և հասկացությունները դատավորների կողմից կիրառելի են բոլոր իրավական համակարգերի կողմից, որոնց միջև առկա իրավական հակասությունները լուծվում են համեմատական իրավունքի կիրառմամբ<sup>26</sup>: Այս մոտեցման հետ համաձայն էին համեմատական իրավունքի բազմաթիվ իրավագետներ, ինչն էլ էականորեն նպաստեց աշխարհում համեմատական իրավունքի զարգացմանը:

Մեծ Բրիտանիայում համեմատական իրա-

վունքը 20-րդ դարում ավելի զարգացած չէր, քան վերոնշյալ երկրներում: Չնայած 1945 թվականին Քեմբրիջի համալսարանում սրբ Ա. Մակ Նեյրի կողմից ստեղծվեց Համեմատական իրավունքի ամբիոնը, այնուամենայնիվ Համեմատական իրավունքը չէր զարգանում այնպես, ինչպես մայրցամաքային եվրոպական երկրներում: Միևնույն իրավիճակն էր նաև ԱՄՆ-ում: Համեմատական իրավունքի ինստիտուտներ առկա են շատ քիչ համալսարաններում: Այսպես, Կոնստանտինեսկոյի (1982) համաձայն նշված համալսարանների կողմից համեմատական իրավունքի վերաբերյալ գրքերի հրատարակումը այդքան էլ նշանակալից չէր<sup>27</sup>: Այնուամենայնիվ, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, աշխարհում անգլերեն լեզվի լայն տարածմամբ պայմանավորված, համեմատական իրավունքի զարգացման կենտրոնում՝ Արևմտյան Եվրոպայում, տեղի էր ունենում «Իրավունքի ամերիկանացում» երևույթը:

20-րդ դարում, համեմատական իրավունքի ամենակարևոր ներկայացուցիչներից էր Ռ. Շլեսինգերը, ով իր «Համեմատական իրավունք. նախադեպեր, տեքստ և նյութեր» գրքով ներկայացրել է նախադեպային մեթոդը (փաստերով հիմնավորված մոտեցում), որը, համաձայն Ռ. Մաթեի (2011) «շրջադարձային է ոչ միայն համեմատական իրավունքի մեթոդոլոգիայում, այլ նաև համեմատական մարդաբանության համար»<sup>28</sup>: Հարկ է նշել նաև Ռ. Սակոյին (1991), ով տվել է «իրավունքի ձևավորման տարրերը» տեսությունը<sup>29</sup>, որը տալիս է իրավական ուսումնասիրության մեծ հնարավորություն:

Այսպիսով, ուսումնասիրելով համեմատական իրավունքի պատմության ամենանշանակալից պահերը, կարող ենք նշել, որ համեմատական իրավունքի զարգացման տարրեր փուլերում համեմատական իրավունքի նպատակը և շարժիչ ուժը տարրեր է եղել: Այսպես.

- Հին Հունաստանում, փիլիսոփաների կողմից այլ քաղաք-պետությունների կամ ազգերի իրավական համակարգերի ուսումնասիրությունները ուղղված են եղել առկա իրավունքի զարգացմանը, ինչի լավագույն օրինակն է Պլատոնի «կատարյալ սահմանադրությունը»

- Հին Հռոմում, հիմնական նպատակը «բացարձակ իրավունքի» վերհանումն էր, որը կատարվում էր ոչ թե օբյեկտիվ ուսումնասիրությունների հիման վրա, այլ առավելապես հռոմեական իրավունքի, որպես բացարձակ իրավունքի, առաջխաղացման և ազդեցության տարածման միջոցով: Այստեղ մենք տեսնում ենք իրավունքի մասնակի գլոբալիզացիա հռոմեական իրավունքի մասով, քանի որ այն լինելով հին դարերում ամենազարգացածը, աստիճանաբար դառնում է հին աշխարհում

տարածքային առումով (Հռոմեական կայսրության ընդլայնմանը զուգահեռ) ամենակիրառելի իրավունքը և համեմատական իրավունքը գործում էր հենց այդ ուղղությամբ: Հին աշխարհում, Հռոմեական իրավունքի նվաճողական տարածման և ընդհանուր իրավունք դառնալու հակվածության մասին է խոսում նաև հռոմեացի իրավագետների ձգտումը իրավահամեմատական վերլուծությունների միջոցով վերացնելու այլ ազգերի իրավունքների (հիմնականում սովորության) և հռոմեական իրավունքի միջև առկա հակասությունները, ինչի լավագույն օրինակն է «Անտոնինուսի Սահմանադրությունը»:

• Միջնադարում և Վերածննդի ժամանակաշրջանում Հռոմեական իրավունքը պահպանել էր իր, որպես «համընդհանուր իրավունքի» ազդեցությունը նախկին Հռոմեական կայսրության տարածքում, ուստի նույնիսկ գերմանական ցեղերի և եկեղեցական իրավունքի վերելքի պայմաններում համեմատական իրավունքի նպատակներից էր շարունակում մնալ Հռոմեական իրավունքի, որպես համընդհանուր իրավունքի կիրառման ապահովումը: Հռոմեական իրավունքի մասնակի գլոբալիզացիան հին և միջնադարյան աշխարհում այնպես ամուր էր ներթափանցել իրավագիտության մեջ, որ նույնիսկ միջնադարում գերիշխող համարվող եկեղեցական իրավունքը ուսումնասիրվում և համեմատվում էր Հռոմեական իրավունքի հետ:

• 17-18-րդ դարերում համեմատական իրավունքի ուսումնասիրության առարկան «ընդհանուր սկզբունքի» և «համընդհանուր արդարության» բացահայտումն էր: Այս ժամակաշրջանում համեմատական իրավունքի միջոցով իրավունքի գլոբալիզացիային հասնելու ձգտումն այնքան մեծ էր, որ նույնիսկ առաջին անգամ առաջարկվեց վերագրել իր կազմակերպության ստեղծման գաղափարը:

• 19-րդ դարում համեմատական իրավունքը «գիտության փիլիսոփայության» զարգացմանը զուգահեռ ունեցավ մեթոդաբանական զարգացում, ինչի արդյունքում գիտական ուսումնասիրություններում սկսվեց առանձնահատուկ կերպով կարևորվել համեմատական վերլուծությունը: Այս ժամանակաշրջանում, համեմատական իրավունքի կիրառման մեջ կարևորվում էր հատկապես համընդհանուր իրավական զարգացումը: Իրավունքի ընդհանուր զարգացմանը զուգահեռ, մի շարք կարևոր օրենսգրքերի (հատկապես՝ Ֆրանսիայի և Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքերի) և այլ իրավական ակտերի («Համազերմանական մուրհակների ակտով») մշակումը, որպես իրավունքի կոնկրետ ճյուղերի կոդիֆիկացիայի առաջին քայլեր ժամանակակից իմաստով, իսկ որոշ դեպքերում՝ նաև իրավունքի կոնկրետ ճյուղի համեմատական

ուսումնասիրությունները մի շարք երկրների իրավական համակարգերի վերաբերյալ Լ. Լեվիի («Առևտրային իրավունքը և ...»), բերեցին ոչ միայն ազգային իրավունքի ունիֆիկացիային, այլ նաև առաջ քաշեցին միջազգային համընդհանուր օրենսգրքի ստեղծման գաղափարը և հիմք նախապատրաստեցին միջազգային ունիֆիկացիոն գործընթացների համար: Մյուսնք, համեմատական իրավունքի միջոցով իրավունքի գլոբալիզացիային հասնելու առաջին իրավագիտորեն և գործնականում հիմնավորված դրսևորումներն էին, ինչի արդյունքում առաջացավ միջազգային իրավունքը, ժամանակակից իմաստով, ինչն էլ հանդիսանում էր իրավունքի գլոբալիզացիայի ամենավառ դրսևորումը:

• 20-րդ դարը վստահաբար կարող ենք համարել իրավունքի գլոբալիզացիայի առաջին փուլը, քանի որ հենց այս ժամանակաշրջանում էր, որ միջազգային իրավունքը իր զարգացումն ապրեց և դարձավ իրավունքի լիարժեք ճյուղ: Դեռևս 1900 թվականի թվականին Փարիզում կայացած «Համեմատական իրավունքի առաջին միջազգային համագումարից» համեմատական իրավունքի հեղինակավոր իրավագետների կողմից կարևորվում էր «քաղաքակիրթ աշխարհի համար ընդհանուր իրավունքի» ստեղծման գաղափարը, ինչը պետք է կատարվեր իրավահամեմատական վերլուծությունների միջոցով *տարբեր իրավահամակարգերի միասնականացմամբ և ընդհանուր խնդիրների բացահայտմամբ, իրավունքի զարգացման գործում համեմատական իրավունքի կիրառմամբ և, վերջիվերջո, իրավունքի գլոբալիզացիայի ամենավառ դրսևորումը հանդիսացող միջազգային իրավունքի զարգացման միջոցով:*

Ինչպես տեսնում ենք, համեմատական իրավունքի զարգացման գրեթե բոլոր ժամանակաշրջաններում «բացարձակ իրավունքի», իրավունքի «ընդհանուր սկզբունքների» կամ «համընդհանուր իրավունքի» գաղափարը միշտ առկա է եղել, չնայած՝ գրեթե բոլոր ժամանակաշրջաններում համեմատական իրավունքի նպատակը եղել է իրավունքի զարգացումը:

Այսպիսով, տարբեր ժամանակների և պետությունների իրավական համակարգերը պարբերաբար միմյանցից փոխառել են իրավական մտքի լավագույն դրսևորումները և օրինակ են հանդիսացել պետությունների իրավունքի զարգացման համար, արդյունքում բերելով *իրավունքի անուղղակի գլոբալիզացիայի, որտեղ գործիքը հանդիսացել է համեմատական իրավունքը, իսկ մեթոդը՝ իրավահամեմատական վերլուծությունը:*

- <sup>1</sup> St'u, Donahue Ch., "Comparative Law before the Code Napoléon", The Oxford Handbook of Comparative Law, Ed. Reimann M. and Zimmermann R., 2012, էջ 2:
- <sup>2</sup> St'u, Zweigert K. and Koetz H., An Introduction to Comparative Law, 3<sup>rd</sup> edition, 1988
- <sup>3</sup> St'u, Zweigert K. and Koetz H., An Introduction to Comparative Law, 3<sup>rd</sup> edition, 1988, էջ 49  
<http://www.pierre-legrand.com/zweigert-and-kotz.pdf>
- <sup>4</sup> St'u, Scarciglia R., A Brief History of Legal Comparison: A Lesson from the Ancient to Post-Modern Times, Beijing Law Review, 6, 2015, էջ 297:
- <sup>5</sup> St'u, Amari, E. (1857). Critica di una scienza delle legislazioni comparate (A Critique of a Science of Comparative Legislation), Vol. I-II. Genoa: R.I. de' Sordomuti, repr. (1969). Palermo: Edizioni della Regione siciliana, էջ 139
- <sup>6</sup> St'u, Ավետիսյան Վ., Հոմնական մասնավոր իրավունք, 2013թ., էջ 13:
- <sup>7</sup> St'u, Sherman C. P., "Roman Law in the Modern World", 1874 թ. վերցված Walter Hug, "The History of Comparative Law". էջ 7:
- <sup>8</sup> St'u, Donahue Ch., "Comparative Law before the Code Napoléon", The Oxford Handbook of Comparative Law, Ed. Reimann M. and Zimmermann R., 2012, էջ 5:
- <sup>9</sup> St'u, Սաֆարյան Գ., Ա. Եսայան, Հոմնական իրավունք Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, 2012, էջ 99
- <sup>10</sup> St'u, Hug W., "The History of Comparative Law", Harvard Law Review, 45, 1932, էջ 1027-1070:
- <sup>11</sup> St'u, Adhémar Esmein, "Cours Elementaire D'Histoire Du Droit Français", 1892, էջ 100:
- <sup>12</sup> St'u, Scarciglia R., "A Brief History of Legal Comparison: A Lesson from the Ancient to Post-Modern Times, Beijing Law Review", 6, 2015, էջ 302:
- <sup>13</sup> St'u, Bacon F., "De Augmentis Scientiarum", 1623:
- <sup>14</sup> St'u, David Francis Pocock, "Social anthropology", 1928, էջ 9:
- <sup>15</sup> St'u, Friedman L. M., "History of American Law", New York: Simon & Schuster, 1973, էջ 98:
- <sup>16</sup> St'u, Hug W., "The History of Comparative Law", Harvard Law Review, 45, 1932, էջ 1054:
- <sup>17</sup> St'u, Hug W., "The History of Comparative Law", Harvard Law Review, 45, 1932, էջ 1055:
- <sup>18</sup> St'u, Scarciglia R., "A Brief History of Legal Comparison: A Lesson from the Ancient to Post-Modern Times, Beijing Law Review", 6, 2015, էջ 304:
- <sup>19</sup> St'u, Lambert É., "Comparative psychology", Extrait de Encyclopaedia of the social science, volume 4, New York 1959, էջ 129:
- <sup>20</sup> St'u, Burge W., Sir Alexander Wood Renton, George Grenville Phillimore, Wyndham Anstis Bewes, "Burge's Commentaries on Colonial and Foreign Laws, generally, and in their conflict with each other, and with the law of England", 1907, էջ 1:
- <sup>21</sup> St'u, Bryce J., "Studies in History and Jurisprudence", Vol. 2, էջ 197:
- <sup>22</sup> St'u, Zweigert K. and Koetz H., "An Introduction to Comparative Law", 3<sup>rd</sup> edition, էջ 56:
- <sup>23</sup> St'u, Maine H. S., "Ancient Law", 1861, էջ 1:
- <sup>24</sup> St'u, Friedman L. M., "History of American Law", New York: Simon & Schuster, 1973, էջ 98
- <sup>25</sup> <https://www.britannica.com/science/comparative-law#ref423595>.
- <sup>26</sup> St'u, Rheinstein, M., In Memory of Ernst Rabel. The American Journal of Comparative Law, 5, 1956, էջ 185-196:
- <sup>27</sup> St'u, Constantinesco, L. J. , "Die rechtsvergleichende Methode", 1972, էջ 82. (Comparative Law: Comparative Method). Köln: Karl Heymanns.
- <sup>28</sup> St'u, Mattei U. "The Comparative Jurisprudence of Schlesinger and Sacco: A Study in Legal Influence". In A. Riles (Ed.), 2011. Rethinking the Masters of Comparative Law. Oxford and Portland, OR: Hart. էջ 239
- <sup>29</sup> St'u, Sacco R., "Legal Formants: A Dynamic Approach to Comparative Law (Installment I of II)", American Journal of Comparative Law, 1991.

### Գրականության ցանկ

- Adhémar Esmein, "Cours Elementaire D'Histoire Du Droit Français", 1892.
- Amari E. "Critica di una scienza delle legislazioni comparate" (A Critique of a Science of Comparative Legislation) 1857, Vol. I-II. Genoa: R.I. de' Sordomuti, repr. (1969). Palermo: Edizioni della Regione siciliana.
- Bacon F., "De Augmentis Scientiarum", 1623.
- Bryce J., "Studies in History and Jurisprudence", Vol. 2
- Burge W., Sir Alexander Wood Renton, George Grenville Phillimore, Wyndham Anstis Bewes, "Burge's Commentaries on Colonial and Foreign Laws, generally, and in their conflict with each other, and with the law of England", 1907.
- Constantinesco, L. J. , "Die rechtsvergleichende Methode", 1972.
- David Francis Pocock, "Social anthropology", 1928.
- Donahue Ch., "Comparative Law before the Code Napoléon", The Oxford Handbook of Comparative Law, Ed. Reimann M. and Zimmermann R., 2012.
- Friedman L. M., "History of American Law", New York: Simon & Schuster, 1973.
- Hug W., The History of Comparative Law. Harvard Law Review, 45, 1932.
- Lambert É., "Comparative psychology", Extrait de Encyclopaedia of the social science, volume 4, New York, 1959.
- Maine H. S., "Ancient Law", 1861.
- Mattei U. "The Comparative Jurisprudence of Schlesinger and Sacco: A Study in Legal Influence". In A. Riles (Ed.), 2011 (Rethinking the Masters of Comparative Law. Oxford and Portland, OR: Hart).
- Rheinstein M., In Memory of Ernst Rabel. The American Journal of Comparative Law, 5, 1956.

15. Sacco R., “Legal Formants: A Dynamic Approach to Comparative Law (Installment I of II)”, American Journal of Comparative Law, 1991.
16. Scarciglia R., “A Brief History of Legal Comparison: A Lesson from the Ancient to Post-Modern Times”, Beijing Law Review, 6, 2015.
17. Sherman C. P., “Roman Law in the Modern World”, 1874 թ. վերցված Walter Hug, “The History of Comparative Law”.
18. Zweigert K. and Kötz H., “An Introduction to Comparative Law”, 3rd edition, 1988.
19. Ավետիսյան Վ., Հռոմեական մասնավոր իրավունք, 2013.
20. Սաֆարյան Գ., Եսայան Ա. Հռոմեական իրավունք Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, 2012.

**Արեն Թեր-Բալյան**

Советник генерального директора  
ЗАО “Высоковольтные электросети”,  
Аспирант отдела государственно-правовых исследований  
института философии, социологии и права НАН РА

#### РЕЗЮМЕ

##### *Историческое развитие сравнительного права в контексте глобализации*

Для того, чтобы понять связь между сравнительным правом и глобализацией права, в первую очередь, необходимо изучить историю сравнительного права и понять причины возникновения и развития сравнительного права. В результате этого исследования становится ясно, что сравнительное право всегда было ориентировано на решение вопросов развития права и создания одного единого права, следовательно выполняло унификационные функции и в результате косвенно способствовало глобализации права. Настоящая работа является исследованием истории сравнительного права, цель которого выявить элементы глобализации права в данной отрасли права.

*Ключевые слова:* Развитие сравнительного права, глобализация права.

**Aren Ter-Balyan**

“High Voltage Electric Networks” CJSC,  
Advisor to General Director,  
Doctoral student Department of State and Legal  
Studies Institute of Philosophy, Sociology and Law  
National Academy of Sciences of the Republic of Armenia

#### SUMMARY

##### *The historical development of comparative law in the context of globalization*

In order to find out the relations between the comparative law and the globalization of law, first of all, it is necessary to study the history of comparative law and understand the reasons of occurrence and development of the comparative law. As a result of this study it becomes apparent that comparative law, has always been directed to the solution of the problem of the law development and creation of one unified law, hence, has done the unification function and, in the end, indirectly resulted the globalization of law. The following work is a study of the history of comparative law, the aim of which is to discover the elements of the law globalization in the following branch of law.

*Keywords:* Development of comparative law, globalization of law.